



EUROPEAN
ENDOWMENT FOR DEMOCRACY

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1988 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ԴԱՐՁԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԱԿ-Ի ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՐՑԵՐՈՎ ԿՈՄԻՏԵԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ
ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ



EUROPEAN
ENDOWMENT OF DEMOCRACY

ՄԱԿ-Ի ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԿՈՄԻՏԵԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1988 ԹՎԱԿԱՆԻ
ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ
ԴԱՐՁԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐ
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
ՈՒՆԵՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ձեկույցը կազմեց Տաթևիկ Թոխյանը
Խմբագիր՝ Անահիտ Սիմոնյան
Լեզվական խմբագրումը՝ Ազնիվ Նասոյանի

© Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն
Երևան 2023

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեին ներկայացված այլընտրանքային զեկույց Հայաստանում 1988 թվականի երկրաշարժի հետևանքով անօթևան դարձած քաղաքացիների բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի վերաբերյալ

Սույն զեկույցը պատրաստել է «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի (EED) աջակցությամբ:

Չեկույցի բովանդակությունը և դրանում արտահայտված տեսակետները միմիայն «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ինն են և կարող են չհամընկնել ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի (EED) տեսակետներին:

Չեկույցը կազմեց Տաթևիկ Թոխյանը

Խմբագիր՝ Անահիտ Սիմոնյան

Լեզվական խմբագրումը՝ Ազնիվ Նասյանի

Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն

Երևան 2023

ՆԱԽԱԲԱՆ

1. Սույն փաստաթղթի հեղինակը՝ Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոնը (ՄԻՅԿ), ոչ կառավարական կազմակերպություն է, որն իրականացնում է համապարփակ, ոլորտային և փաստերի վրա հիմնված հետազոտություններ Հայաստանում՝ մարդու իրավունքների ոլորտում: Հետազոտությունները նպատակ ունեն բարձրացնելու երկրում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների վերաբերյալ իրազեկվածությունը և ազդելու պետական քաղաքականության վրա՝ որդեգրելու իրավունքահենք մոտեցում, տվյալ դեպքում՝ բնակարանային իրավունքի ապահովման ոլորտում:
2. Սույն փաստաթուղթը ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեին (այսուհետև՝ Կոմիտե) ներկայացված այլընտրանքային զեկույց է:
3. Այլընտրանքային զեկույցը ՄԻՅԿ-ը ներկայացրել է Կոմիտեի 74-րդ նստաշրջանից առաջ, որի շրջանակում ս.թ. հոկտեմբերի 3-5-ը Կոմիտեն իրականացրել է Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի¹ քննարկումը:
4. Սույն զեկույցով ՄԻՅԿ-ը Կոմիտեին է ներկայացրել իր մտահոգությունները Հայաստանում 1988 թվականի երկրաշարժի հետևանքով անօթևան դարձած քաղաքացիների բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի պաշտպանության վերաբերյալ, որն ամրագրված է «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (այսուհետև՝ Դաշնագիր) 11.1-րդ հոդվածով: Հայաստանը Դաշնագիրը վավերացրել է 1993 թվականին, իսկ Դաշնագրի կամընտիր արձանագրությունը՝ 2020 թվականին, որով հնարավորություն է ստեղծվել Դաշնագրի դրույթների խախտումների վերաբերյալ Հայաստանից անհատական հաղորդումներ (կոմունիկացիաներ) ներկայացնելու Կոմիտե:
5. Սույն զեկույցը, մասնավորապես, կենտրոնանում է Շիրակի մարզի վրա: Այն անդրադառնում է Դաշնագրի 2-րդ և 11.1-ին հոդվածներով պետության ստանձնած պարտավորություններին, որոնք մեկնաբանված են Կոմիտեի թիվ 3², թիվ 4³ և թիվ 7⁴ Ընդհանուր մեկնաբանություններում (այսուհետև՝ ԸՄ):
6. Չեկույցում ներկայացված տեղեկությունները ցույց են տալիս, որ ներկայում տարվող քաղաքականությունը հակասում է ինչպես թիրախային խմբի համար բնակարանային պայմանների բավարարության չափանիշներն ապահովելու (Կոմիտեի ԸՄ 4), այնպես էլ դրանց նկատմամբ առանց անհրաժեշտ պաշտպանական երաշխիքների ապահովման (Կոմիտեի ԸՄ 7) հարկադիր վտարումների իրականացումից զերծ մնալու՝ պետության պարտավորությանը: Պետությունը մինչ այժմ եղած ռեսուրսների առավելագույն սահմաններում միջոցներ չի ձեռնարկել, որպեսզի արդարեսիվ կերպով (progressively), բոլոր հարկ եղած եղանակներով ապահովի թիրախային խմբի բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի լրիվ իրացումը, իսկ ներկայում առաջադրված քաղաքականության ուսումնասիրումը վկայում է, որ նախատեսված գործողությունները ևս իրականացվելու են դաշնագրային պարտավորությունների խախտմամբ (Դաշնագրի 2.1-ին և 11.1-ին հոդվածներ):

1. Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=4slQ6QSmIBEDzFEovLCuW0fp9m5PoYHYLH3qkquQgx-za0pentvpy9c8VEjAo3KztZypdKnFFZpSH43Hdy8c5kq7Umnhgkk6pqb62qpv0WNRSmOGiFyrQFDAP9Fo9PsZ>

2. Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/pdfid/4538838e10.pdf>

3. Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/pdfid/47a7079a1.pdf>

4. Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/docid/47a70799d.html>

7. Հայաստանի երկրորդ և երրորդ պարբերական զեկույցների դիտարկումից (2014 թ.) ի վեր արձանագրվել է հետընթաց բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի պաշտպանության ներպետական երաշխիքների առումով, քանի որ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում պետությունը հրաժարվել է բավարար կենսապայմաններ և բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի պաշտպանության սահմանադրաիրավական կարգավորումներից, ինչը հակասում է Դաշնագրի 2.1-ին հոդվածով սահմանված պետության պարտավորություններին⁵:
8. Պետությունը պետք է վերանայի աղետի գոտու բնակարանային հարցի լուծման իր ներկայիս քաղաքականությունը՝ ապահովելով դրա համապատասխանությունը Դաշնագրի 11.1-ին հոդվածով սահմանված իր պարտավորություններին:

1988 թվականի երկրաշարժի հետևանքով տուժած անձանց բնակապահովման քաղաքականության անհամապատասխանությունը Դաշնագրի 11.1-ին հոդվածի պահանջներին

9. Կոմիտեին 2020 թվականին ներկայացված չորրորդ պարբերական զեկույցում պետությունը ներկայացրել է բնակարանային խնդրի լուծման ընդհանուր հաշվետվություն, ինչպես նաև վիճակագրություն (պարբ. 13-15), որտեղ անդրադառնում է երկրաշարժի հետևանքով անօթևանության խնդրի լուծմանն ուղղված ծրագրերին, որը, սակայն, լիարժեք չի արտացոլում աղետի գոտու բնակարանային խնդրի իրական պատկերը, այդ թվում՝ բնակապահովման խնդրի առջև կանգնած ընտանիքների թվաքանակը, կարիքները (պարբ. 170-177):
10. Հայաստանում չկան 1988 թվականի երկրաշարժի հետևանքով աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիների հիմնախնդիրների համալիր գնահատման արդյունավետ մեխանիզմներ⁶:
11. Երկրաշարժից 35 տարի անց համալիր լուծում չի տրվել աղետի գոտու անօթևանության խնդրին: Երկրաշարժի հետևանքով անօթևան դարձած անձինք տասնամյակներ շարունակ ապրել են ոչ հիմնական շինություններում (այսպես կոչված՝ տնակներում) կամ ոչ պատշաճ բնակարանային պայմաններում (օրինակ՝ վթարային հանրակացարանային շենքերում), չի ապահովվել նրանց մի շարք իրավունքների, այդ թվում՝ ընտանիքի բավարար կենսամակարդակի, առողջության պահպանման, կրթության, աշխատանքի և այլ իրավունքների իրացումը: Տվյալները փաստում են, որ Շիրակի մարզում ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքները մինչ այժմ ապրում են ծայրահեղ աղքատության պայմաններում⁷: Պետության՝

5. Տվյալ հետընթացով պայմանավորված՝ Դաշնագրի 2.1-ին հոդվածով սահմանված պետության պարտավորությունների խախտումը մանրամասն ներկայացված է Կոմիտեի 74-րդ նստաշրջանին ընդառաջ ուղարկված «Հայաստանում տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության իրավիճակը» խորագրով համատեղ զեկույցի շրջանակում (անգլ.՝ «The State of Economic, Social and Cultural Rights in Armenia: A Joint Civil Society Report on Economic, Social and Cultural Rights»): Խնդիրը նաև ներկայացված է ՄԻՅԿ-ի 2020 թվականին իրականացրած «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և զգալիությունների երաշխիքների վերանայում և կատարելագործում» խորագրով հետազոտության շրջանակում:

տե՛ս https://www.rightsresearch.net/files/ugd/f1a9eb_be91ea375c7948e190d80df59d1a5cdc.pdf

6. Հիմնախնդիրներին անդրադարձ կա նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի տարբեր տարիների տարեկան հաղորդումներում: Տե՛ս ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան, «ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և զգալիությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդում, 2021 թ., 183-186 էջեր, <https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf>

Տե՛ս ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան, «ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, Մարդու իրավունքների և զգալիությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդում, 2020 թ., էջեր 200-202, <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf>

7. Տե՛ս, օրինակ, «Ծայրահեղ աղքատության դեմքը... Շիրակ», Panorama.am, 31 հունվարի, 2023 թ., հասանելի է 26.08.2023-ի դրությամբ, <https://www.panorama.am/am/news/2023/01/31/%D4%BE%D5%A1%D5%B5%D6%80%D5%A1%D5%B0%D5%A5%D5%B2-%D5%A1%D5%B2%D6%84%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/2788487?fbclid=IwAR2W9MTFv1DWFcBR6hwiceln4754G9d6jnPa78qDNE3vSDGk-WxSCfb6kado>

«Պետությունն ինչի՞ համար է, եթե ծայրահեղ աղքատ խավին չհանի այդ փոսից», MediaLab.am, 22 հոկտեմբերի, 2022 թ., հասանելի է 26.08.2023-ի դրությամբ, <https://medialab.am/240625/>

«Շիրակ» կենտրոնն առաջին անհրաժեշտության պարագաներ է տրամադրել ծայրահեղ աղքատության մեջ ապրող ընտանիքին», «Ազատություն», 24 հոկտեմբերի, 2022 թ., հասանելի է 26.08.2023-ի դրությամբ, <https://www.azatutyun.am/a/32098474.html>

երկրաշարժից տուժած անձանց հանդեպ պարտավորությունների ձախողման, տվյալ անձանց՝ բավարար կենսամակարդակի և բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի տևական ոտնահարման ցայտուն օրինակ է «Փարոս» համայնքատիրության դեպքը⁸:

12. Հայաստանում մինչ օրս չի իրականացվել սեգրեգացված վիճակագրության վարում, որը հնարավորություն կտա պատկերացում կազմելու 1988 թվականի երկրաշարժի հետևանքով անօթևան դարձած քաղաքացիների տարբեր խմբերի (կանանց, երեխաների, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց և այլն) կարիքների և իրավունքների իրացման խնդիրների մասին:
13. Վիճակագրության բացակայությունը հնարավորություն չի տվել առաջին հերթին պետությանը՝ գնահատելու իրականացրած գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև համարժեք կերպով արտացոլելու Դաշնագրի 11.1-ին հոդվածի կատարման փաստացի կարգավիճակը, այն էլ՝ որոշակի ժամանակահատվածներում:
14. Երկրաշարժի հետևանքով անօթևան դարձած անձանց տվյալները ներկայում արտացոլված չեն պաշտոնական վիճակագրության մեջ:
15. Հայաստանում մինչ օրս առկա չէ նաև ազգային բնակարանային քաղաքականությունը ներկայացնող մեկ ամփոփ փաստաթուղթ, որը ԸՄ 4-ով դիտարկվում է իբրև բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի իրացման առանցքային բաղադրիչ:
16. Պետության չորրորդ պարբերական զեկույցում Կոմիտեին ներկայացված են մինչև 2019 թվականը երկրաշարժի հետևանքով անօթևան դարձած անձանց բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված բյուջետային հատկացումների և ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ տվյալներ (պարբ. 172-177):
17. 2019 թվականին ՄԻՀԿ-ի իրականացրած ուսումնասիրությունը⁹, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) տարբեր տարիների հաղորդումները¹⁰ ցույց են տալիս, որ երկրաշարժի հետևանքով անօթևան դարձած անձանց բնակարանային փոխհատուցման տրամադրումը կարգավորող իրավական դաշտը պարունակել է բազմաթիվ բացեր, չի ապահովվել թիրախային խմբի՝ բավարար կենսամակարդակի և բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի պատշաճ իրացումը:
18. Խնդրի համալիր լուծման բացակայության պայմաններում բնակարանային փոխհատուցում ստացած բազմաթիվ քաղաքացիներ ստիպված օտարել են տրամադրված բնակարանները՝ առողջական և կենսական խնդիրների լուծման անհրաժեշտությունից դրդված, արդյունքում վերադարձել են տնակ¹¹՝ միաժամանակ զրկվելով բնակարանային պայմանների բարելավման պետական աջակցությունից:
19. Բնակարանների հանձնում ենթադրող ծրագրերի գործարկումից հետո պետությունը չի իրականացրել բնակարանային պայմանների գնահատում կամ հետադարձ կապ քաղաքացու

8. Տվյալ դեպքի մանրամասները ՄԻՀԿ-ը ուսումնասիրել և հրապարակել է 2019 թվականին: Տե՛ս «Այլընտրանքային զեկույց՝ ներկայացվող ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեին. բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքը Հայաստանում՝ կենտրոնանալով Գյումրի քաղաքում 1988 թ. երկրաշարժի հետևանքով անօթևանություն ձեռք բերած քաղաքացիների վրա», Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» ՀԿ, «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ, «Բոլորը հանուն հավասար իրավունքների հիմնադրամ» ՀԿ, «Արդյունավետ կառավարում և համայնքային զարգացում» ՀԿ, Էջեր 18-19, 2019 թ.,

https://epfarmenia.am/sites/default/files/Document/Realization_of_the_right_to_adequate_housing_in_Armenia_Gyumri_arm.pdf

9. Տե՛ս «Այլընտրանքային զեկույց՝ ներկայացվող ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեին. բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքը Հայաստանում՝ կենտրոնանալով Գյումրի քաղաքում 1988 թ. երկրաշարժի հետևանքով անօթևանություն ձեռք բերած քաղաքացիների վրա», 2019 թ.,

https://epfarmenia.am/sites/default/files/Document/Realization_of_the_right_to_adequate_housing_in_Armenia_Gyumri_arm.pdf

10. Տե՛ս ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2020 և 2021 թվականների տարեկան հաղորդումները, նույն տեղում:

11. Տե՛ս, օրինակ, «Գյումրին. երկրաշարժը բաժանել է երկու քաղաքի», «Հետք», 23 մարտի, 2019 թ., հասանելի է 26.08.2023-ի դրությամբ, <https://hetq.am/hy/article/102091>

հետ: Ուսումնասիրությունները վկայում են, որ որոշ ընտանիքներ չեն տեղափոխվել իրենց ստացած բնակարաններ, քանի որ դրանք շահագործման են հանձնվել՝ չունենալով տարրական պայմաններ¹²:

20. Պետությունն իրականացված ծրագրերը չի ենթարկել պատշաճ մշտադիտարկման, ծրագրերի արդյունքների վերաբերյալ հանրային հաշվետվողականության որևէ մեխանիզմ չի գործել, ծրագրերը չեն ձևավորվել շահառուների հետ խորհրդակցությունների, արդյունավետության և ըստ կարիքի գնահատման միջոցով¹³, ինչի արդյունքում հաշվի կառնվեին շահառուների հատուկ բնակարանային կարիքները, առողջական և սոցիալական այլ առանձնահատկությունները, խոցելիությունը: Համաձայն ԸՄ 4-ի՝ վերոգրյալը բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի կարևոր բաղադրիչ է:
21. Այսպիսով՝ մինչև 2019 թվականը աղետի գոտու բնակավայրերի քաղաքացիների համար պետության իրականացրած բնակապահովման ծրագրերը և դրանց համապատասխան բնակապահովման խնդրին տրված լուծումները հակասել են Դաշնագրի 11.1-ին հոդվածի պահանջներին:
22. Պետության չորրորդ պարբերական զեկույցի կապակցությամբ ներկայացված Հարցերի ցանկով (List of Issues)¹⁴ Կոմիտեն խնդրել է պետությանը զեկուցել անօթևանության մակարդակի և անօթևանության նվազեցմանն ուղղված միջոցառումների մասին (պարբ. 11):
23. Հաջորդիվ ներկայացվող տվյալները և վերլուծությունը վկայում են, որ աղետի գոտու բնակարանային հարցերի լուծմանն ուղղված՝ պետության ներկայիս քաղաքականությունը և իրականացվող միջոցառումները ուղղված չեն անօթևանության խնդրի վերացմանը կամ կանխարգելմանը:
24. Կոմիտեի ներկայացրած Հարցերի ցանկին տրված պետության պատասխաններում¹⁵ անդրադարձ չի արվում աղետի գոտու բնակավայրերում նախատեսվող վերաբնակեցման արդյունքում անօթևանության նվազեցման կամ կանխարգելման նպատակով նախատեսված գործողություններին կամ երաշխիքներին: Փոխարենը պետության ներկայացրած փաստաթղթերը, որոնք, համաձայն պատասխանի, պետք է ապահովեն սոցիալական պաշտպանության բնագավառի ընդհանուր առաջնահերթությունների շարքում հռչակված սոցիալապես անապահով ու խոցելի բնակչության կարողությունների ու հնարավորությունների համալիր ընդլայնումը, այդ թվում՝ բնակարանային և այլ կարիքների բավարարումը (պարբ. 19-ին տրված պատասխան), նախագծային փուլում են և հանրորեն հասանելի չեն:
25. Վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ¹⁶ ստեղծվել է Աշխատանքային խումբ, որին առաջադրվել է հավաքել երկրաշարժից հետո աղետի գոտում տեղադրված կամ կառուցված ժամանակավոր կացարանների բաշխվածության, պատկանելության, վիճակի, դրանցում բնակվող ընտանիքների թվի և նման պայմաններում հայտնվելու պատճառների վերաբերյալ տեղեկություններ: Հավաքված տեղեկությունների հիման վրա Աշխատանքային խումբը միաժամանակ պետք է առաջարկություններ մշակեր ոչ առաջնային շինություններում բնակվող ընտանիքների վերաբնակեցման գործընթացի՝ բնակարանային պայմանների բարելավման վերաբերյալ և գնահատեր այդ գործընթացում պետության պարտավորությունների ծավալը:

12. Տե՛ս «Այլընտրանքային զեկույց՝ ներկայացվող ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեին. բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքը Հայաստանում՝ կենտրոնանալով Գյումրի քաղաքում 1988 թ. երկրաշարժի հետևանքով անօթևանություն ձեռք բերած քաղաքացիների վրա», էջ 15, 2019 թ., https://epfarmeria.am/sites/default/files/Document/Realization_of_the_right_to_adequate_housing_in_Armenia_Gyumri_arm.pdf

13. Տե՛ս Լույս տեղում, էջ 11:

14. Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=4slQ6QSmIBEDzFEovLCuW0fp9m5PoYHYLH3qkguOgwg95LxdDWFfmXyXtazyoZG%2F9tpxWK6w2CEV%2BQ72funb%2B0BCFmD0RCkTKlIXwh1V0dsjmbUF1cDrT58%2Bi2Slq>

15. Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=4slQ6QSmIBEDzFEovLCuW0fp9m5PoYHYLH3qkguOgxy26Fs6Hlio%2F1wls9NH6gfz6Akpq5Lpuy08jI5BOG4NdVca5vE1Y4tLVQNf6B0harnyDoMapP0Jj5GNfjAaF8U%2F>

16. Տե՛ս Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի N 1658-Ս որոշում, <https://www.irtek.am/views/act.aspx?aid=97728>

26. Պետությունը, սակայն, չի հանրայնացրել Աշխատանքային խմբի աշխատանքների ընթացքում պարզված տեղեկությունները, մասնավորապես՝ երկրաշարժից հետո աղետի գոտում տեղադրված կամ կառուցված ժամանակավոր կացարանների բաշխվածության, պատկանելության, վիճակի, դրանցում բնակվող ընտանիքների թվաքանակի վերաբերյալ, ինչպես նաև տվյալներ և հետազոտություններ նման պայմաններում հայտնվելու պատճառների վերաբերյալ: Կառավարության գործունեության ծրագրին համապատասխան մշակվել է ներկայացված առաջարկությունների իրագործմանն ուղղված միջոցառումների ծրագիր¹⁷, որն ընդգրկում է 2021-2022 թվականների ժամանակահատվածը, և նախատեսվել է ստեղծել իրավական հիմքեր հիմնախնդրի կանոնակարգման համար: Առանցքային իրավական ակտ է ՀՀ Կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1601-Ն որոշումը¹⁸:
27. ՀՀ Կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1601-Ն որոշմամբ հաստատված է աղետի գոտու բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություններից ազատելու կարգը¹⁹: Հողամասերը ոչ հիմնական շինություններից ազատելու ժամանակ այդ տարածքի ոչ հիմնական շինությունները տիրապետող կամ օգտագործող քաղաքացիները համայնքի ղեկավարի կողմից գրավոր ծանուցվում են դրանք ազատելու և քանդելու (ապամոնտաժելու), իսկ որոշակի շինությունների դեպքում՝ նաև օրինականացման պայմանների ու ժամկետների վերաբերյալ²⁰:
28. Աղետի գոտու բնակարանային խնդրի լուծման կապակցությամբ պետության որդեգրած քաղաքականությունը (ոչ հիմնական շինություններից ազատել պետական և համայնքային հողերը) չի հանգեցնելու անօթևանության խնդրի վերացմանը կամ կանխարգելմանը, քանի որ Կառավարության թիվ 1601-Ն որոշման հիմքում դրվել է ոչ հիմնական շինություններից ազատման սկզբունքը, այլ ոչ թե շինություններում բնակվող անձանց բնակապահովման խնդրի լուծումը: Այս մտահոգության մասին են վկայում նաև սույն զեկույցի շրջանակում հավաքված փորձագիտական կարծիքները²¹:
29. Կառավարության թիվ 1601-Ն որոշմամբ նախատեսված է, որ ոչ հիմնական շինությունների ազատման, քանդման (ապամոնտաժման), ինչպես նաև որոշ շինությունների օրինականացման պայմանների և ժամկետների վերաբերյալ անհամաձայնության պարագայում դրանք լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ ներխուժումը կանխելու կամ վերացնելու հարթությունները կարգավորող ՀՀ Կառավարության թիվ 797-Ն որոշմամբ²²: Ստացվում է, որ տվյալ անձանց ոչ հիմնական շինություններում ապրելու փաստը դիտարկվում է իբրև ներխուժում, և իրականացվում է ապօրինի ներխուժման վերացում, որն, ըստ էության, փաստացի հարկադիր վտարում է: Թիվ 797-Ն որոշման դրույթներն ինքնին խնդրահարույց են, դրանց շրջանակում իրականացվող ՀՀ ոստիկանության գործողությունները համաչափության

17. Տե՛ս ՀՀ Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Ն որոշում, https://www.arlis.am/Annexes/6/2021_N1902hav.1.pdf

18. Տե՛ս ՀՀ Կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի N 1601-Ն որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=169446>

19. Որոշման դրույթները տարածվում են 1988 թվականի երկրաշարժից հետո աղետի գոտու բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում տեղադրված կամ կառուցված բոլոր ոչ հիմնական շինությունների և որպես ոչ հիմնական շինություն համարակալված հիմնական շինությունների վրա (բացառությամբ օրինական ընթացակարգերով տրամադրված թույլտվության հիման վրա տեղադրված ոչ հիմնական շինությունների)՝ անկախ դրանց օգտագործման նշանակությունից (բնակության, առևտրի, կենցաղային և այլ նպատակներով) և պատկանելությունից: Ոչ հիմնական շինության ապամոնտաժման ընթացքում առաջացած շինանյութերի և աղբի՝ ոչ հիմնական շինության ապամոնտաժումից հետո տարածքից հեռացման և աղբավայր տեղափոխման պարտավորությունը դրվել է ոչ հիմնական շինությունը զբաղեցրած անձանց վրա:

20. Որպես ոչ հիմնական շինություն համարակալված քարաշեն կառույցները քաղաքաշինական փաստաթղթերի պահանջներին համապատասխանելու դեպքում ենթակա են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օրինականացման և գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման:

21. Անհրաժեշտ տվյալների հավաքման նպատակով 2023 թվականի հուլիսի 20-ին այց է իրականացվել Գյումրի, որի ընթացքում հանդիպումներ են եղել երկրաշարժի հետևանքով անօթևան դարձած անձանց իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող տեղական հասարակական կազմակերպությունների՝ «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կետրոն» ՀԿ-ի և «Շիրակ կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցիչների, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Շիրակի մարզային ստորաբաժանման ներկայացուցիչների հետ:

22. Տե՛ս ՀՀ Կառավարության 2007 թվականի մայիսի 10-ի N 797-Ն որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149403>

խնդիրներ են պարունակում, առաջացնում են իրավական վեճեր, դատական միջամտության անհրաժեշտություն²³:

30. Թիվ 1601-Ն որոշմամբ նախատեսվող վերաբնակեցման գործընթացի հիմքում Կառավարության թիվ 797-Ն որոշմամբ վտարումների իրականացումը նախատեսելն անընդունելի է, քանի որ դրանով չի ապահովվում պատշաճ իրավական պաշտպանության միջոցների կամ ընթացակարգերի տրամադրումը, ինչը Կոմիտեի ԸՄ 7-ով նախատեսվող պահանջ է²⁴: Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ թիվ 797-Ն որոշմամբ սպառիչ նախատեսված այն հանգամանքները, որոնց առկայության պայմաններում ոստիկանությունն իրավասու է կատարելու ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողություններ, չեն ապահովում վտարումների իրավաչափ պրակտիկա: Մինևույն ժամանակ ոստիկանության գործողությունները կանխող պաշտպանության միջոցը դատարանների որոշումներն են, որոնց post factum առկայությունը պրակտիկայում նշանակություն չի ունենում մարդկանց համար, մասնավորապես՝ իրենց իրավունքը վերականգնելու հարցում: Թիվ 797-Ն որոշմամբ սահմանված չէ իրավական համապատասխան գործիքակազմ մինչև ոստիկանության գործողությունների կատարումը եղած դրությունը վերականգնելու համար: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ աղետի գոտու բնակավայրերի հողամասերը ոչ հիմնական շինություններից ազատելու նպատակով իրականացված վտարումների պարագայում ևս, անգամ տվյալ շինությունների քանդումը ոչ իրավաչափ գնահատելու դեպքում, հնարավորություն չի ստեղծվելու իրականացնել գործողություններ անձի նախկին դրությունը վերականգնելու կամ անբարենպաստ վիճակը վերացնելու կամ բարենպաստ վիճակը վերականգնելու համար:
31. ԸՄ 7-ով պահանջվում է, որ նախքան որևէ վտարում իրականացնելը և հատկապես այնպիսիք, որոնք վերաբերում են մեծ խմբերի (ինչպես աղետի գոտու բնակավայրերի դեպքում է), մասնակից պետությունները պետք է հետևեն, որ բոլոր հնարավոր այլընտրանքներն ուսումնասիրվեն տուժած անձանց հետ խորհրդակցելով՝ ուժի կիրառման անհրաժեշտությունից խուսափելու կամ առնվազն նվազագույնի հասցնելու նպատակով: Կառավարության թիվ 1601-Ն որոշմամբ չի նախատեսվում երկրաշարժից հետո աղետի գոտում տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություններում բնակվող քաղաքացիների հետ խորհրդակցությունների իրականացում՝ ուղղված հարկադիր վտարման արդյունավետ այլընտրանքների ապահովմանը:
32. Կառավարության թիվ 1601-Ն որոշմամբ նախատեսված չեն վերաբնակեցման նպատակով վտարվող կողմի կատարած ցանկացած իրավական ծախսի համար փոխհատուցման մեխանիզմներ, ինչպես պահանջվում է Կոմիտեի նախադեպային որոշումներով²⁵:
33. Պետությունը ջանքեր չի գործադրել նաև թիվ 1601-Ն կարգավորումների շրջանակում շարժական ցանկացած վնասված գույքի համար համարժեք փոխհատուցում ստանալու իրավունքի սահմանման ուղղությամբ, ինչը Կոմիտեի ԸՄ 7-ով սահմանված պահանջ է: Ընդհակառակը, հղում տալով թիվ 797-Ն որոշման դրույթներին, բացառել է փոխհատուցման տրամադրման հնարավորությունը:
34. Մինևույն ժամանակ, թիվ 1601-Ն որոշումը զգայուն չէ մինչ օրս տնակներում բնակվող խոցելի այն խմբերի հատուկ կարիքների նկատմամբ, որոնք են կանայք, երեխաները, հաշմանդամություն ունեցող անձինք, երիտասարդները, տարեցները, տեղացիները և այլ խոցելի անհատներն ու խմբերը, որոնք անհամաչափորեն տուժելու են վերաբնակեցման արդյունքում:

23. Տե՛ս ԳՅ Մարդու իրավունքների պաշտպան, «ԳՅ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդում, 2021 թ., էջ 605-611, <https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf>

24. Այս առումով տեղին է նաև վկայակոչել «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 2.3-րդ հոդվածը, որը պահանջում է մասնակից պետություններից ապահովել «արդյունավետ պաշտպանության միջոց» այն անձանց համար, որոնց իրավունքները խախտվել են, ինչպես նաև պետությունը պարտավորվում է ապահովել «իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը, դրանք տրամադրելու դեպքում»: Տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docID=18500>

25. Տե՛ս, օրինակ, «Նասերն ընդդեմ Իսպանիայի» (Չաղորդագրություն թիվ 127/2019, 14.03.2022), <https://housingrightswatch.org/jurisprudence/naser-v-spain-communication-no-1272019-14032022>

Կոմիտեն իր ԸՄ 7-ում անդրադառնում է տարբեր խմբերի, այդ թվում՝ անօթևան դարձած կանանց խոցելիության, մասնավորապես՝ սեփականության իրավունքի ձեռքբերման հասանելիության առնչվող խնդիրներին, բռնության և սեռական ոտնձգության ռիսկերին և այլն:

35. Ըստ Կոմիտեի ԸՄ 7-ի՝ վտարումը չպետք է հանգեցնի նրան, որ մարդիկ անօթևան կամ խոցելի դառնան մարդու այլ իրավունքների ոտնահարման համար: Եթե տուժած անձինք չեն կարողանում հոգալ իրենց կարիքները, մասնակից պետությունը պետք է ձեռնարկի համապատասխան բոլոր միջոցները՝ իր հասանելի ռեսուրսների առավելագույն չափով՝ հետևելու, որ համապատասխան այլընտրանքային բնակարանները, վերաբնակեցումը կամ մշակելի հողի մատչելիությունը, ըստ անհրաժեշտության, հասանելի լինեն: Կոմիտեն նաև պահանջում է, որ այլընտրանքը պետք է ձևավորվի վտարվող անձանց հետ իրական խորհրդատվության մեջ մտնելու, նրանց կարիքները ուսումնասիրելու և գնահատելու արդյունքում, ինչպես նաև պետք է համապատասխանի Կոմիտեի ԸՄ 4-ով սահմանված բավարար բնակարանի չափանիշներին²⁶: Կառավարության թիվ 1601-Ն որոշմամբ վերաբնակեցման նպատակով իրականացվող վտարումների դեպքում նախատեսված չէ պետության կողմից վերոնշյալ պահանջներին համապատասխանող՝ այլընտրանքային բնակարանների տրամադրում:
36. Կառավարության թիվ 1601-Ն որոշմամբ իրականացվող վերաբնակեցման արդյունքում բնակարանային այլընտրանքների տրամադրման հարցին տրվում է տարբերակված մոտեցում՝ ըստ տնակում հայտնվելու հիմքերի:
37. Պետությունը, սահմանելով գործընթացը, չի անդրադառնում նախորդ փուլի բացթողումներին, իրավունքների խախտումները շտկելու իր պարտավորություններին, նախկին այն ռիսկերին, որոնց պատճառով տվյալ անձանցից շատերը դեռ բնակվում են տնակներում²⁷, միևնույն ժամանակ հիմքում դնում է հենց այդ պատճառները:
38. Տարիներ շարունակ պետությունը ձախողել է երկրաշարժի հետևանքով անօթևան դարձած կամ ընդհանրապես բնակարան կորցրած մարդկանց բնակարանային ապահովման գործընթացը: Նախկինում տրամադրված փոխհատուցումները լիարժեք իրենց նպատակին չեն ծառայել, հասցեականության խնդիրներ են ունեցել: Հանրության (խոցելի խմբերի) հետ համագործակցային միջավայր ձևավորելու, բնակարանային փոխհատուցումների վերաբերյալ բոլոր մտահոգություններին համարժեք արձագանքի բացակայության և այլ միջոցառումների ձախողման կամ թերացումների հետևանքով պետությունն անցում է կատարել մարդու իրավունքներին ուղղակի միջամտության քաղաքականության: Պետք է արձանագրել նաև, որ դեռևս ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքների մի մասը այդ պայմաններում բնակվողի կարգավիճակում է հայտնվել ոչ թե ուղղակիորեն երկրաշարժի հետևանքով, այլ «երկրորդային» պատճառներով:
39. Կառավարության թիվ 1601-Ն որոշմամբ ոչ հիմնական շինությունների ազատման ժամանակ դրանցում բնակվող ընտանիքների վերաբնակեցման արդյունքում պետական մոտեցումները ձախողում են Կոմիտեի ԸՄ 7-ով սահմանված՝ համաչափության չափանիշը, քանի որ դրանք չեն տարբերակում բնակարանի իրավունքի իրացման եղանակները և այդպիսով բացառում են յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունների հաշվառումը, ինչը չի կարող համատեղելի համարվել Դաշնագրի 11.1-ին հոդվածով նախատեսված պետության պարտավորությունների հետ:
40. Խնդրահարույց են նաև Կառավարության թիվ 1601-Ն որոշմամբ տրամադրվող փոխհատուցման մեխանիզմները:

26. Տե՛ս, օրինակ, «Ի.Դ.Զ.-ն ընդդեմ Իսպանիայի» (Հաղորդագրություն թիվ 2/2014, 17.06.2015), <https://www.housingrightswatch.org/jurisprudence/idg-v-spain-communication-no-22014-17062015#:~:text=The%20right%20to%20housing%20should,full%20realization%20of%20this%20right>

27. Տե՛ս մանրամասն «Այլընտրանքային զեկույց՝ ներկայացվող ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեին. բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքը Հայաստանում կենտրոնանալով Գյումրի քաղաքում 1988 թ. երկրաշարժի հետևանքով անօթևանություն ձեռք բերած քաղաքացիների վրա», 2019 թ., https://epfarmenia.am/sites/default/files/Document/Realization_of_the_right_to_adequate_housing_in_Armenia_Gyumri_arm.pdf

41. Այսպես՝ պետության կամ համայնքի կողմից բնակարան ստացած կամ դրա համար տրամադրված ֆինանսական աջակցության միջոցով ձեռք բերած բնակարանն (բնակելի տունն) օտարած ընտանիքներին տրամադրվում է աջակցություն բնակելի տարածության վարձակալության համար, 1 տարի ժամկետով, և ոչ հիմնական շինությունը քանդվում (ապամոնտաժվում) է վարձակալության առաջին ամսվա գումարի (60 հազար ՀՀ դրամ) փոխանցվելուց հետո մեկամսյա ժամկետում: Այս պարագայում մարդկանց մտահոգությունները կապված են, օրինակ, Գյումրիում ազատ բնակարանային ֆոնդի առկայության, վարձավճարի անբավարարության, գերբնակեցման ռիսկերի հետ²⁸: Հետևաբար բավարար բնակարանային պայմաններ ունենալու հնարավորություններն առանց այն էլ խոցելի ընտանիքների համար էապես սահմանափակվում են:
42. Թիվ 1601-Ն որոշմամբ սահմանված չեն նաև վերաբնակեցման արդյունքում ընտանիքներին բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար տրամադրվող ֆինանսական միջոցների օգտագործմանն օժանդակելու մեխանիզմներ, ինչն առանձնահատուկ բեռ է դնում խոցելի խմբերին պատկանող անձանց վրա՝ բնակարանային շուկայում գտնել այլընտրանքային բնակարաններ իրենց քաղաքային միջավայրում, և հակասում է Կոմիտեի ԸՄ 7-ում տեղ գտած չափանիշներին: Նման մեխանիզմների օրինակ են բնակարանային ապահովության բարելավման շրջանակում վարկային արտոնությունները, հիփոթեքային ծրագրերում ընդգրկվելու հնարավորությունները և այլն:
43. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ոչ հիմնական շինությունների քանդման հետևանքով հարկադիր վտարումների վտանգի տակ են լինելու նաև միայնակ տարեց անձինք: Բնակարանային պայմանների կտրուկ փոփոխությունը կարող է խաթարել նրանց ապրելակերպը, հետևաբար այլընտրանքային կացարանները չպետք է խզեն նրանց կապը գոյություն ունեցող սոցիալական ցանցից, ինչն արտահայտել է Կոմիտեն իր նախադեպային որոշումներում²⁹:
44. Փոխհատուցման հաջորդ մեխանիզմներից է բնակարանի գնման վկայագրի (ԲԳՎ) տրամադրումը: Այս դեպքում ԲԳՎ-ի շահառու ընտանիքները մտահոգ են անշարժ գույքի ձեռքբերման անհնարինություն, բնակարանային ֆոնդի պահանջարկի և առաջարկի անհամապատասխանության, իրենց մշտական բնակության վայրից հեռու բնակարան ձեռք բերելու հարկադրված լինելու կապակցությամբ³⁰:
45. Դեռևս սահմանված չէ ԲԳՎ-ի շահառու հանդիսացող ընտանիքներին տրամադրվող աջակցության չափը: Այն կազմելու է աջակցության տրամադրմանը նախորդող ժամանակահատվածում ՀՀ կադաստրի կոմիտեի հրապարակած՝ տվյալ բնակավայրում բնակարանների շուկայական միջինացված գնի տվյալների հիման վրա՝ 1 քառակուսի մետր մակերեսի հաշվարկով: Սակայն այս դեպքում էլ ինդրահարույց է ընտանիքի անդամների թվի և համապատասխան հասանելիք սենյակների քանակային հարաբերակցությունը բազմանդամ ընտանիքների դեպքում՝ ինչպես նախորդիվ փոխհատուցում ստանալու կամ սեփականության իրավունքի տիրապետման հիմքով, այնպես էլ ընտանիքի անդամ համարվելու տեսանկյունից:
46. Ընտանիքի անդամ համարվելու չափանիշները սահմանված են Կառավարության թիվ

28. Տե՛ս, օրինակ, «Անօթևանության ինդիկատորի յուրօրինակ «լուծում»». Գյումրիում տնակների բնակիչները կհայտնվեն փողոցում», «Գալա» հեռուստաընկերություն, 13 մայիսի, 2023 թ., հասանելի է 26.08.2023-ի դրությամբ, https://galatv.am/hy/3207822/?fbclid=IwAR3j9WU3-lbJeX0IjgMJU40lg28uRMqj98Ms4_bbZiiRhYTw7vVZVU-zXo0

29. Տե՛ս, օրինակ, «Լորն Ձոզեֆ Ուոլթերսն ընդդեմ Բելգիայի» (Հաղորդագրություն թիվ 61/2018, 23.11.2021), <https://abusivelending.org/jurisprudence/l-j-w-v-belgium-communication-no-612018-23112021>

30. Նշվածն արձանագրվել է երկրաշարժի հետևանքով անօթևան դարձած անձանց իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների՝ «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ-ի և «Շիրակ կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցիչների, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Շիրակի մարզային ստորաբաժանման ներկայացուցիչների հետ անցկացված փորձագիտական հարցազրույցների շրջանակում (տվյալների հավաքման նպատակով 2023 թվականի հուլիսի 20-ին Գյումրի իրականացված այց):

1601-Ն որոշմամբ, փաստացի սահմանափակում են բնակարանով ապահովված լինելու հնարավորությունը՝ կրկին անօթևանության վտանգի տակ դնելով մարդկանց: Այսպես, օրինակ՝ որևէ այլ բնակարանում սեփականության բաժնեմաս ունեցող անձը չի կարող դիտարկվել ընտանիքի անդամ և օգտվել բնակարանային պայմանների բարելավման մասով ցուցաբերվող պետական աջակցությունից, չնայած որ գործնականում հնարավորություն չունի իրացնելու սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող իրավագործությունները (տիրապետում, օգտագործում, տնօրինում) և փաստացի տիրապետում և օգտագործում է քանդման ենթակա տնակը:

47. Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի տվյալների³¹ շուրջ 7000 ոչ հիմնական շինությունների ընդհանուր թվից պետական և համայնքային հողամասերի վրա է գտնվում 4068-ը (2964-ը՝ ՀՀ Շիրակի մարզում, 1104-ը՝ ՀՀ Լոռու մարզում), որոնցից, ըստ նախնական վերլուծության, 1089 ընտանիք հավակնում է տարբերակված մոտեցմամբ աջակցության ցուցաբերման, 1136 ոչ հիմնական շինություն ենթակա է քանդման՝ առանց աջակցության տրամադրման, 1843 ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքները հավակնում են սոցիալական բնակարանային ֆոնդի, որոնց նկատմամբ մոտեցումները պետք է հստակեցվեն 2024 թվականին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվող քաղաքականության համաձայն:
48. Գյումրիում, ըստ հրապարակված տվյալների, հաշվառվել է շուրջ 2600 ոչ հիմնական շինություն, որտեղ բնակվողների թիվն առկա չէ: Ըստ տեղեկությունների՝ ոչ հիմնական շինությունների քանդման և վերաբնակեցման արդյունքում Գյումրիում շուրջ 800 ընտանիք ոչ մի փոխհատուցում չի ստանալու³²:
49. Ըստ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած տեղեկությունների³³ ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների վերաբնակեցման գործընթացն իրականացվելու է 2024-2027 թվականների ընթացքում:
50. Բացի ոչ հիմնական շինություններում բնակվողներից՝ կան երկրաշարժի հետևանքով անօթևան դարձած խմբեր, որոնց խնդրի կարգավորմանը պետությունը չի անդրադառնում սահմանված նոր քաղաքականությամբ, մասնավորապես՝ Կառավարության թիվ 1601-Ն որոշմամբ, ինչպես, օրինակ, վթարային շենքերում կամ վարձակալական հիմունքներով բնակվողներին: Ըստ այդմ՝ պետության քաղաքականությամբ կրկին դրսևորվում է տարբերակված մոտեցում, որի շրջանակում անտեսվում են խոցելի վիճակում հայտնված անձանց բնակարանային իրավունքները: Սա ևս մեկ անգամ փաստում է, որ որդեգրված քաղաքականությունը ոչ հիմնական շինություններից ազատման և տարածքների քաղաքաշինական միջավայրը վերականգնելու նպատակ է հետապնդում, այլ ոչ թե լուծում յուրաքանչյուրի՝ պատշաճ բնակարանային իրավունքի ապահովման խնդիրը:
51. Թիվ 1601-Ն որոշումը դիտարկում է միայն վթարային շենքերում հաշվառում ունեցող այն անձանց, որոնք բնակվում են տնակներում: Երկրաշարժի հետևանքով անօթևան դարձած ընտանիքները, սակայն, շարունակում են բնակվել նաև վարձակալական հիմունքներով, ինչպես նաև հանրապետությունում առկա անբավարար տեխնիկական վիճակում գտնվող (3-րդ և 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող) շենքերում:
52. Երկրաշարժից հետո անօթևան դարձած անձանց շրջանում կան նաև վարձակալական հիմունքներով բնակվողներ, որոնք տարաբնույթ պատճառներով չեն հասցրել մինչև 2008 թվա-

31. ՄԻՀԿ-ի կողմից 2023 թ. հուլիսի 14-ին ուղարկված հարցման կապակցությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատասխանով ներկայացված տեղեկություններ:

32. Տե՛ս «Գյումրիում սկսվում է տնակների ապամոնտաժման գործընթացը», «Յետք», 28 մարտի, 2023 թ., հասանելի է 26.08.2023-ի դրությամբ, <https://www.azatutyun.am/a/32339004.html?fbclid=IwAR2E0P441SjnG7bi0vTNOKwUzBzjLo3MnJITEEVIMSikPoQMw5FARPyDuXE>

33. Տե՛ս նույն տեղում:

կանը հաշվառվել աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման հերթացուցակում, ինչի հետևանքով զրկվել են բնակապահովման իրավունքից³⁴:

53. Վթարային շենքերում մարդիկ բնակվում են 1989 թվականից և մինչ օրս պետության կողմից չեն ստացել որևէ աջակցություն կամ փոխհատուցում, չի իրականացվել շենքերի վերանորոգում, իրավասու մարմինների կողմից չեն իրականացվել կարիքների գնահատում և կենսապայմանների մշտադիտարկում: Վթարային շենքերում պարբերաբար փլուզումներ են լինում, հասանելի չեն հանրային ծառայությունները, ավելին՝ այդ տարածքներում հանրային ծառայությունների հասանելիության ապահովումն անհնար է, ենթակառուցվածքներն իսպառ բացակայում են, կան շենքեր, որոնք ամբողջովին լքված տարածքներում են³⁵: Նման շենքերի վերաբերյալ տեղեկատվական համակարգ դեռևս չի ստեղծվել, ինչը հնարավորություն կտար բնակարանային ֆոնդի վիճակի բարելավմանն ուղղված արդյունավետ որոշումներ կայացնելու, միևնույն ժամանակ դուրս բերելու առավել վատթար վիճակում գտնվող շենքերի մասով տվյալները և արագ արձագանքելու:

34. Սահմանված ժամկետներից հետո դիմումներ չեն ընդունվել, և այդ ժամկետում բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառվելու նպատակով՝ սահմանված կարգով դիմում չներկայացրած անձանց նկատմամբ աղետի գոտու գյուղական և քաղաքային բնակավայրերում բնակելի տների հատկացման մասով պետական աջակցության ցուցաբերման պարտավորությունների կատարումը համարվել է դադարեցված: Տե՛ս ԳՅ Մարդու իրավունքների պաշտպան, «ԳՅ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդում, 2021 թ., էջ 183-186, <https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf>

35. Տե՛ս մանրամասն «Այլընտրանքային զեկույց՝ ներկայացվող ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեին. բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքը Հայաստանում կենտրոնանալով Գյումրի քաղաքում 1988 թ. երկրաշարժի հետևանքով անօթևանություն ձեռք բերած քաղաքացիների վրա», 2019 թ., https://epfarmenia.am/sites/default/files/Document/Realization_of_the_right_to_adequate_housing_in_Armenia_Gyumri_arm.pdf

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

54. Իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ մինչև 2019 թվականը աղետի գոտու բնակավայրերի քաղաքացիների համար պետության իրականացրած բնակապահովման ծրագրերը և դրանց համապատասխան մարդկանց բնակապահովման խնդրին տրված լուծումները հակասել են «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 11.1-ին հոդվածի պահանջներին:
55. Պետությունը տարիներ շարունակ չի վարել երկրաշարժի հետևանքով բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցողների վերաբերյալ վիճակագրություն:
56. Պետությունը չի իրականացրել պատշաճ երկխոսություն երկրաշարժի հետևանքով բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող անձանց հետ, չի ապահովել նրանց կյանքի որակի շարունակական բարելավում՝ Դաշնագրի 11-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:
57. Բնակապահովման գործընթացը չի եղել արդյունավետ, ինչի հետևանքով անօթևանության խնդիրն անընդհատ վերարտադրվել է: Տարիներ շարունակ ոչ պատշաճ և անարդյունավետ քաղաքականության պատճառով ոտնահարվել են սոցիալ-տնտեսական մի շարք այլ իրավունքներ, թիրախային խմբի խոցելիությունը խորացել է:
58. Բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի պաշտպանության ներպետական երաշխիքների առումով տեղի է ունեցել հետընթաց, քանի որ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում պետությունը հրաժարվել է բավարար կենսապայմանների և բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի պաշտպանության սահմանադրաիրավական կարգավորումներից:
59. Աղետի գոտու բնակարանային հարցերի լուծմանն ուղղված ներկայիս քաղաքականությունը մարդակեցտորն չէ, չի ձևավորվել թիրախային խմբի հետ իրական խորհրդատվության մեջ մտնելու, նրանց կարիքները ուսումնասիրելու և գնահատելու արդյունքում, ուղղված չէ անօթևանության խնդրի վերացմանը կամ կանխարգելմանը, խոցելի խմբերի, այդ թվում՝ երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց, տարեցների համար հատուկ ռիսկերի հասցեագրմանը: Որդեգրված քաղաքականությամբ չի ապահովվում ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեի ԸՄ 4-ով, 7-ով, ինչպես նաև Կոմիտեի Նախադեպային որոշումներով սահմանված չափանիշների պահպանումը, ինչի հետևանքով խախտվելու են Հայաստանի դաշնագրային պարտավորությունները:
60. Կառավարության թիվ 1601-Ն որոշման հիմքում է դրվել ոչ հիմնական շինություններից ազատման սկզբունքը, այդ թվում՝ հարկադիր վտարումների իրականացման միջոցով՝ առանց վերաբնակեցվող ընտանիքների շրջանում անօթևանության բացառման և բավարար բնակարանային պայմանների ապահովման երաշխիքների:
61. Կառավարության թիվ 1601-Ն որոշմամբ նախատեսված վերաբնակեցումը ապահովող հարկադիր վտարումների գործընթացը սահմանող դրույթները չեն համապատասխանում Հայաստանի՝ «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրով ստանձնած պարտավորություններին: Տվյալ գործընթացի շրջանակում չի ապահովվում Կոմիտեի ԸՄ 7-ով և Նախադեպային որոշումներով սահմանված պահանջների պահպանումը, մասնավորապես հաշվի չեն առնվում խոցելի խմբերի հատուկ կարիքները,

սահմանված չէ վնասների փոխհատուցման արդյունավետ մեխանիզմ, այդ թվում՝ իրավական ծախսերի, շարժական գույքի վնասումների փոխհատուցման:

62. Կառավարության թիվ 1601-Ն որոշմամբ նախատեսվող վերաբնակեցումների շրջանակներում բնակարանային ապահովության այլընտրանքների և նախատեսված փոխհատուցման մեխանիզմների վերլուծությունը փաստում է, որ դրանք չեն համապատասխանում Կոմիտեի ԸՄ 4-ով, 7-ով և նախադեպային որոշումներով սահմանված պահանջներին, ըստ այդմ՝ չեն ապահովելու բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի իրացումը:
63. Պետությունը չի անդրադառնում տարբեր տարիներին, այդ թվում՝ երկրաշարժի հետևանքով վթարային դարձած, բնակության համար ոչ պատշաճ պայմաններ ունեցող շենքերում և շինություններում բնակվող, ինչպես նաև երկրաշարժի հետևանքով անօթևան դարձած և վարձակալական հիմունքներով բնակվող անձանց խնդրին՝ դրսևորելով տարբերակված մոտեցում: Մինչ օրս սահմանված չեն այդ դեպքերում պետության աջակցության ձևաչափը, հիմնական պայմանները և առաջնահերթությունները, վերաբնակեցման կարգը:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Առաջարկ 1. Ապահովել «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 11.1-ին հոդվածով սահմանված բավարար կենսամակարդակի և բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի իրացման օրենսդրաիրավական հիմքերը՝ ներառյալ սահմանադրական երաշխիքները:

Առաջարկ 2. Վարել անօթևանության խնդիրն արտացոլող սեգրեգացված վիճակագրություն, որը կարտացոլի բնակարանային իրավունքի իրացման պատկերը, այդ թվում՝ երկրաշարժի հետևանքով դեռևս ժամանակավոր կացարաններում ապրող և բավարար բնակարանային պայմաններ չունեցող անձանց շրջանում:

Առաջարկ 3. Ընդունել ազգային բնակարանային քաղաքականությունն արտացոլող փաստաթուղթ, որը կլինի իրավունքահենք, կձևակերպի բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի իրացման պետական ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը, կմշակվի թիրախային խմբի մասնակցության սկզբունքի պահպանմամբ: Ազգային բնակարանային քաղաքականությունը պետք է համադրելի լինի միջգերատեսչական տարբեր դերակատարների կողմից իրականացվող ծրագրերի հետ, մասնավորապես՝ սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման և ընդլայնման շրջանակներում, և պետք է ձևավորվի առավել խոցելի խմբերի՝ ներառյալ երեխաների, կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների և նրանց ընտանիքների հետ խորհրդակցությունների իրականացմամբ:

Առաջարկ 4. Նախքան պետական քաղաքականության և ռազմավարական ծրագրի մշակումն ու ընդունումը միջանկյալ լուծում տալ աղետի գոտու բնակավայրերում անօթևանության խնդիրն, առաջնահերթ արձագանքել տվյալ անձանց շրջանում ծայրահեղ աղքատության խնդիրն՝ անօթևան անձանց տրամադրելով բնակարանի վարձակալության միջոցներ, նյութական և ոչ նյութական աջակցություն՝ առաջնային սոցիալական կարիքների և բավարար կենսամարդակի ապահովման համար:

Առաջարկ 5. Պետական քաղաքականությունն ու ռազմավարական ծրագիրը պետք է կատարված լինեն մինչև Կոմիտեի հաջորդ դիտարկումը՝ ապահովելով աղետի գոտում անօթևանության խնդրի վերացում և կանխարգելում՝ քաղաքականության սահմանված ժամկետների պահպանմամբ (2024-2027 թթ.) և պետության դաշնագրային պարտավորությունների աստիճանական իրականացմամբ (progressive realization):

Առաջարկ 6. Հանրայնացնել վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 1658-Ա որոշմամբ ստեղծված Աշխատանքային խմբի իրականացրած ուսումնասիրության արդյունքները, այդ թվում՝ երկրաշարժից հետո աղետի գոտում տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություններում բնակվող անձանց թվաքանակի, ընտանիքների կազմի, խոցելիության, կարիքների ներկայացմամբ:

Առաջարկ 7. Վերանայել աղետի գոտու բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություններից ազատելու գործընթացը, այդ թվում՝ Կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1601-Ն որոշումը, մասնավորապես՝

- Պետության կողմից իրականացվող բոլոր գործողությունների հիմքում դնել աղետի գոտու բնակավայրերում անօթևանության կանխարգելման և վերացման առաջնահերթ նպատակը, այլ ոչ թե ոչ հիմնական շինությունների վերացումը (ինչպես այժմ սահմանված է Կառավարության թիվ 1601-Ն որոշմամբ):
- Վերանայված քաղաքականությունը զգայուն դարձնել խոցելի խմբերի (կանայք, երեխաները, հաշմանդամություն ունեցող անձինք, երիտասարդները, տարեցները, տեղացիները և այլ խոցելի անհատները) հատուկ կարիքների նկատմամբ՝ պայմանավորված անհամաչափորեն տուժելու հանգամանքով և այնպիսի գործոններով, ինչպիսիք են խտրականության, բռնության, շահագործման, սոցիալական միջավայրի ռիսկերը:
- Վերանայված քաղաքականությամբ խստագույնս պահպանել Կոմիտեի ԸՄ 7-ով սահմանված համաչափության չափանիշի պահանջը՝ ապահովելով յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունների հաշվառմամբ բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի իրացումը: Սրանով պայմանավորված՝ վերանայել ընտանիքի անդամին ներկայացվող պահանջները՝ հաշվի առնելով անձի սեփականության իրավունքի իրացման իրական հնարավորությունները:
- Սահմանել ընտանիքներին տրամադրվող ֆինանսական միջոցների օգտագործմանն օժանդակելու մեխանիզմներ (ինչպես, օրինակ՝ բնակարանային ապահովության բարելավման շրջանակում վարկային արտոնություններ, հիփոթեքային ծրագրերում ընդգրկվելու հնարավորություններ և այլն):
- Վերաբնակեցման գործընթացում գերծ մնալ հարկադիր վտարումների իրականացումից, ոչ հիմնական շինություններում բնակվող քաղաքացիների հետ խորհրդակցությունների իրականացմամբ ապահովել հարկադիր վտարման արդյունավետ այլընտրանքներ: Եթե վտարումներն անխուսափելի են, նախատեսել Կոմիտեի ԸՄ 7-ով և նախադեպային որոշումներով սահմանված չափանիշներին համապատասխան պաշտպանության մեխանիզմներ, մասնավորապես հաշվի առնել խոցելի խմբերի հատուկ կարիքները, վնասների փոխհատուցման արդյունավետ մեխանիզմների սահմանումը, այդ թվում՝ իրավական ծախսերի, շարժական գույքի վնասումների փոխհատուցման մասով՝ երաշխավորելով տվյալ անձանց բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի իրացումը: Վտարումներ իրականացնելու դեպքում ապահովել նաև Դաշնագրի 2.2-րդ և 3-րդ հոդվածներով սահմանված՝ խտրականության արգելքի երաշխավորումը՝ լրացուցիչ համապատասխան միջոցների ձեռնարկմամբ ու խտրականության որևէ դրսևորման բացառմամբ:

Առաջարկ 8.1. Իրականացնել իրական խորհրդակցություններ հետևյալ խմբերի հետ: Խորհրդակցությունների արդյունքներով սահմանել վերաբնակեցման և բնակարանային պայմանների բարելավման գործուն մեխանիզմներ՝ հատկապես նախատեսելով այդ մարդկանց հնարավոր անօթևանությունը կանխարգելելու կամ վերացնելու համար այլընտրանքային համապատասխան մեխանիզմներ: Սահմանված բոլոր մեխանիզմները պետք է երաշխավորեն բավարար բնակարանային պայմաններ ունենալու՝ Կոմիտեի ԸՄ 4-ով նախատեսված չափանիշների պահպանումը.

- երկրաշարժի հետևանքով անօթևան դարձած և մինչ այժմ պետական աջակցություն չստացած անձինք, այդ թվում՝ վարձակալական հիմունքներով ապրող, գերբնակեցված պայմաններում ապրող,
- երկրաշարժի հետևանքով կամ այլ պատճառներով վնասված/վթարային շենքերում ապրող և բնակարանային փոխհատուցման ծրագրերի շրջանակներում չընդգրկված անձինք,
- աջակցություն (պետական, մասնավոր, բարեգործական) ստանալուց հետո տարատեսակ պատճառներով կրկին անօթևան դարձած և ոչ հիմնական շինություններում (այդ թվում՝ ոչ պետական և համայնքային ենթակայության հողամասերում տեղակայված) ապրել շարունակող անձինք,

- դ) աղետի գոտու բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություններից ազատելու արդյունքում սահմանված կարգով աջակցությունից չօգտվող ընտանիքներ, որոնք դառնում են անօթևան:

Առաջարկ 8.2. Մինչ այժմ պետական աջակցություն ստացած ընտանիքների հետ իրական խորհրդակցությունների միջոցով ուսումնասիրել նրանց ներկայիս կարիքները՝ համարժեք բնակարանային պայմաններ ապահովելու համար: Տարբեր տարիներին բնակարանային աջակցություն ստացած անձանց շրջանում (ԲԳԿ և սոցիալական բնակարանների տեսքով) իրականացնել բնակարանային պայմանների գնահատում, երաշխավորել պայմանների համապատասխանելիությունը Կոմիտեի ԸՄ 4-ով սահմանված չափանիշներին:

Առաջարկ 9. Ստեղծել վերաբնակեցման և բնակարանային պայմանների բարելավման գործընթացի մշտադիտարկման մեխանիզմ, գնահատել և ներկայացնել իրականացվող ծրագրերի արդյունքները:

Առաջարկ 10. Պետական քաղաքականությամբ անդրադառնալ տարբեր տարիներին, այդ թվում՝ երկրաշարժի հետևանքով վթարային դարձած, բնակության համար ոչ պատշաճ պայմաններ ունեցող շենքերում և շինություններում բնակվող անձանց խնդրին՝ բացառելով խտրական և տարբերակված մոտեցումը:



EUROPEAN
ENDOWMENT FOR DEMOCRACY

Սույն զեկույցը պատրաստել է «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի (EED) աջակցությամբ:

Չեկույցի բովանդակությունը և դրանում արտահայտված տեսակետները միմիայն «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ինն են և կարող են չհամընկնել Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի (EED) տեսակետներին: